9-րդ դասարանի ավարտական քննության թեստի կառուցվածքը

Թեստը բաղկացած է 32 առաջադրանքից:

Ճիշտ պատասխանի ընտրությամբ են թեստի 1-20-րդ առաջադրանքները: Դրանցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր: Այս առաջադրանք-ներին պատասխանելիս՝ ընտրված պատասխանի համարը պետք է վերցնել շրջանակի մեջ: Օրինակ՝

Նշվածներից որո՞նք են Արտավազդ II-ի կառավարման տարեթվերը.

(1) Ք.ա. 55-34 թթ.

2) Ք.ա. 87-55 թթ.
3) Ք.ա. 97-64 թթ.
4) Ք.ա. 80-59 թթ.

Կարճ պատասխան են պահանջում թեստի 21-30-րդ առաջադրանքները: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:
Օրինակ՝

Լրացնել արքայի բաց թողնված անունը.

Ք.ա. 55 թ. Հայաստանում գահ է բարձրանում Արտավազդ II թագավորը:

31-րդ առաջադրանքը կարճ պատասխաններ պահանջող առաջադրանք է: Այս առաջադրանքի առանձնահատկությունն այն է, որ մեջբերված դասագրքային տեքստում բացակայում են տարեթվեր, պատմական գործիչների անուններ, պատմական իրադարձությունների տարեթվեր, տեղանուններ և այլն, որոնք աշակերտն ինքը պիտի լրացնի: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

32-րդը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է, որի յուրաքանչյուր հարցին պետք է պատասխանել մեկ նախադասությամբ: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների հանրագումարից (առավելագույնը **40 միավոր**):

Միավորների բաշխումը

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

ա) ընտրովի պատասխանով՝ 20 միավոր

բ) կարճ պատասխանով՝ 17 միավոր

գ) ընդարձակ պատասխանով՝ 3 միավոր

Գնահատման կարգը

Ընտրովի պատասխանով առաջադրանքների գնահատումը

Առաջադրանքներ 1-20

Առավելագույն միավորը՝ 20

1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

Կարճ պատասխանով առաջադրանքների գնահատումը

Առաջադրանքներ 21-30

Առավելագույն միավորը՝ 10

1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

Առաջադրանք 31

Առավելագույն միավորը՝ 7

1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

Ընդարձակ պատասխանով առաջադրանքի գնահատումը

Առաջադրանք 32

Առավելագույն միավորը՝ 3

1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

Այս առաջադրանքը կատարելու համար աշակերտը պետք է ընդհանուր առմամբ լուսաբանի առաջադրանքի պահանջը: Դասագրքային բառացի ձևակերպումը պարտադիր չէ: Աշակերտն ազատ կարող է շարադրել սեփական մտքերը:

2010-2011 ուստարում 9-րդ դասարանի պետական ավարտական քննությունների հանձնարարվող գրականությունը.

1. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Բ. Հարությունյան, Երևան, 2007:

2. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Բ. Հարությունյան, Երևան, 2008, 2009 :

3. «Հայոց պատմություն», Նոր շրջան, 8-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Վ. Բարխուդարյան, Երևան, 2007:

4. «Հայոց պատմություն», Նորագույն շրջան, 9-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Վ. Բարխուդարյան, Երևան, 2008:

Առաջադրանքների ճիշտ պատասխան է համարվում բացառապես վերոհիշյալ դասագրքերում առկա համապատասխան նյութը: